

յիշէ Լըկլերկ (Կարր. Ա, 775-9): Հրեայք
 եւս ունէին այս նպատակով «հաց սգոյ»
 եւ «բաժակ մխիթարութեան» (Երմ. ԺԶ,
 7): Մեր մէջ ալ նոյնքան հին է այս սո-
 վորոյթ: Տիգրան իւր Մաժան եղբոր գե-
 րեզմանին վրայ բազին մը կը շինէ, «զի
 ի զոհիցն ամենայն անցաւորք վայելեա-
 ցեն, եւ ընդունիցին հիւրք երեկօթիւք»
 (Խոր. 146): Հոգեհանգստեան վախճանն
 յայտնի է հոս. բայց թէ որքան պատմա-
 կան է՝ չեմ գիտեր, թէեւ գաղափարին
 հնութիւնն ապահով է:

Հեթանոսութեան կամ հրէութեան սկը-
 սած այդ պաշտօնն աւելի ճշդեց եւ ազ-
 նուացուց քրիստոնէութիւնը. եւ հայ եկե-
 ղեցւոյ մէջ եւս կը գտնենք զայն աւետա-
 րանին հետ միասին: Անոր յաճախութիւնն
 իւր օրով ցոյց կու տայ Մանդակունին,
 երբ կ'ըսէ՝ թէ ննջեցեալն «հանապազ օրհնի
 եւ յիշի ի յիշատակացն կատարելոց»
 (179): Նոյնը կը հաստատէ Պարտաւայ
 ժողովն ալ հետագայ վկայութեամբ. «ի
 յիշատակս վախճանելոցն՝ յընտանեաց նո-
 ցա որ ինչ ըստ կարգի օրինաց քրիստո-
 նէից կատարեն զմխիթարութիւն ոգւոց նո-
 ցա, կամ զքառասունսն եւ զագապս ի
 հանգիստ նոցա» (Պրտ. ԺԸ): Արծրունին
 Գագիկ արքայ՝ իւր Գուրգէն եղբոր հոգ-